ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 12, 1963 Общественные науки

Գ. Ֆիրացյան

ՀԱՑԱՎԱՆ ԱՄՐՈՑԻ 1962 Թ. ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

Գառնիի հնագիտական արշավախմբի մի ջոկատը շարունակեց 1951 թ. ձեռնարկած, Գառնիից ոչ հեռու գտնվող, Հացավան գյուղի հին ամրոցի սիստեմատիկ պեղումները, նպատակ ունենալով՝ հետազոտել ամրոցի բուն տերիտորիան, ինչպես նաև պարզել պարսպապատի շրջագիծը։

Աշխատանքների ընթացքում բացվեցին պարսպապատի նոր զգալի չափով ավերված հատվածներ, ընդամենը քարե մեկ կամ երկու պահպանված շարքից։ Արևելյան մասում բացվեց



Նկ. 1

մի խճճված հանգույց, որի հետևանքով երևան եկան մի նոր կոնտրֆորսի հետքերը, նախորդ № 4 և 5 կոնտրֆորսների միջև։ Պարսպապատի արևելյան կողմի կոնտրֆորսների թիվը այսպիսով հասավ 7-ի։ Նույն տիպի քառանկյունի կոնտրֆորսներ հայտնաբերվեցին արևմտյան և հարավային մասերում։ Ամրոցի հարավ-արևմտյան կողմում բացվում են ամենայն հավանա-

---

1 Աշխատանքներին մասնակցում էին հնագիտության և ազգագրության ինստիտուտի ասպիրանտ Ժ. Խաչատրյանը, կրտսեր գիտական ախատակից Ս. Հարությունյանը և արվեստի ինստիտուտի կրտսեր գիտական աշխատակից Կ. Ղաֆադարյանը որպես ճարտարապետ։ Լուսանկարչական աշխատանքները կատարել է Գ. Ժամկոչյանը։

կանությամբ անկյունային, ըստ երևույթին քառակուսի, աշտարակի հետքերը։ Այդպիսով պարսպապատի արևմտյան մասի ընդհանուր երկարությունը 1962 թ. բացված նոր հատվածի հաշվին աճեց մոտավորապես 20 մետրով։

Կառուցվածքի արևելյան և արևմտյան կողմերը օժտված են քառանկյունի ելուստներով կոնտրֆորսներով. հյուսիսայինը՝ կլոր և կիսակլոր աշտարակներով, իսկ հարավայինը՝ առայժմ անկյունային, ըստ երևույթին քառակուսի, մի աշտարակով, որի կողքը, հավանաբար, տեղադրված էր ամրոցի մուտքը, և երկու կոնտրֆորսով (նկ. 1)։

Ամրոցի հյուսիսային ֆասադը շատ նման է պարթևական ժամանակաշրջանի մի ամրության, տեղադրված Միջագետքի Կիշ շումերական ծագում ունեցող քաղաքի վերին շերտերում[2] (նկ. 2)։



նկ. 2

Հացավան ամրոցի քառանկյունի ելուստները, հավանաբար, ձայնակցում են ուրարտական ամրոցների կոնտրֆորսների հետ (Արին բերդ, Կարմիր բլուր, Կամո), բայց այստեղ նրանք զուգորդվում են ավելի ուշ ժամանակաշրջանի համար բնորոշ աշտարակների կլոր և կիսակլոր ձևերի հետ։

Ամրոցի ներսում աշխատանքները հիմնականում ծավալվեցին նախորդ տարում, կենտրոնական տեղամասում պեղված քառակուսիներից դեպի հյուսիս, ընդհուպ մինչև պարիսպը։ Պեղումների ընթացքում բացվեցին բազմաթիվ պատեր, հիմնականում երկու տարբեր մակարդակների վրա (նկ. 3)։ Ներքևի մակարդակի պատերը կանոնավոր են և իրար հետ կապված։ Նախորդ պեղումների ժամանակ կենտրոնական մասում բացված արևելքից-արևմուտք ուղղություն ունեցող պատի հետ ուղիղ անկյուն է կազմում մի երկար պատ, որը ձգվում է դեպի հյուսիս, միանում է արևելքից-արևմուտք ձգվող մի այլ պատի հետ։ Վերջինս կիսակլոր աշտարակի ներսից հարող սենյակի մասն է կազմում, որի հատակագիծը մոտավորապես քառակուսի ձև ունի՝ հյուսիսից աբսիդաձև մասով։ Այս պատերի հիմքերը դրված են մայր հողի կամ բնական ժայռի վրա և համապատասխանում են արտաքին պարիսպների մակարդակին, ինչպես նաև կապակցվում և ներդաշնակվում են պարիսպների եզրագծի հետ։

Ներքևի պատերը, ինչպես արդեն հայտնի է անցյալ տարվա պեղումներից, գետաքարի կանոնավոր շարքերից են կազմված։ Այս տարի բացվեցին պատեր, որոնց շարքերը շեղ դրված քարերից են կազմված, մի շարքի քարերը մի ուղղությամբ, հաջորդը հակառակ ուղղությամբ, որի հետևանքով ստացվում է այսպես կոչված եղևնաձև շարվածք։

Պատերի հաստությունը 1,08 մ—1,14 մ է, պահպանված բարձրությունը մինչև 0,66 մ։ Պարսպին հարող սենյակի հարավային մասում բացվածք կա, լայնը 0,75 մ։ Սենյակների հատակը կրաքարային մասսա պարունակող տոփանված հողից է, որը հանգչում է բնական թերթաքարային հիմքի վրա։ Քառ. Д—4-ում բացվեց մի հարթակ, բարձրությունը հատակից 0,35 մ, որի եզրը տուֆի տաշված քարերից է կազմված։ Հարևան քառակուսիում (E—4) հատակին բացվեց մի կառույց՝ քառանկյան ձևի (1,60×1,50 մ), որը հիշեցնում է անտիկ իմպլուվիումը, ներքին բակերում՝ տեղումներից առաջացած ջուրը հավաքող ծանծաղ մի ավա-

[2] Excavations at Kish and Barghutiat 1933. S. Langdon, Sassanian and parthian remains in central Mesopotamia, Iraq, VI, 2, 1934, նկ. 5։

զան։ Այս կառույցը տուֆակերտ եզր ունի, լայնությունը 0,22—0,30 մ, բարձրությունը հատակից 2,7 սմ։ Քանի որ նրա վրայով անցնում է ավելի ուշ շրջանի պատկանող կորագիծ պատի մի հատված, հնարավորություն չկար ուսումնասիրել այդ կառույցը և որոշել նրա իսկական նշանակությունը։

Այս տարվա պեղումները տվյալներ տվեցին նաև շինարարական երկրորդ փուլի գոյության մասին։ Դրանք վերաբերում են մի քանի պատերի, որոնց հիմքերը ավելի բարձր մակարդակի վրա են քան վերը նկարագրվածները։ Այդ մասին լավ պատկերացում է տալիս այն կորագիծ պատը, որը անցնում է հատակին սարքված կառույցի վրայով։ Պատի ներքևի մասի շարքը դտնվում է այդ կառույցից 0,64 մ բարձրության վրա։

Նկ. 3

Կիսակլոր աշտարակին կից սենյակի արևմտյան նախնական պատի երկարությամբ, ավելի ուշ, երբ այն քանդված էր և հասնում էր 0,66 մ բարձրության, դրված է եղել մի երկրորդ պատ, որը իր լայնքի կիսով հենվում էր ներքևի պատին։

Երկրորդ, ավելի բարձր հորիզոնի վրա կառուցված պատերը իրենց հատկանիշներով տարբերվում են ցածր հորիզոնի վրա կառուցված պատերից։ Դրանք սարքված են պակաս խնամքով, քարերը շարված են անկանոն։ Պատերի լայնությունը 0,60—0,80 մետրից չի անցնում։

Պեղումների ընթացքում մեծ քանակությամբ տարբեր տեսակի կավանոթների բեկորներ դուրս եկան, որոնք որոշ պատկերացում են տալիս խեցեգործության զարգացման մասին։ Նախորդ տարվա նման, խեցեղենի ստվար մասը հասարակ, «խոհանոցային» տիպի է, կարմրավուն, սև և գորշ գույնի կճուճների բեկորներ, որոնք ժամանակագրական որոշակի կերպար չունեն։

Հանդիպում են հնագույն տիպի ուղիղ կամ դեպի ներս ծռված պսակների ու շրթերի բեկորներ։ Պրոֆիլավորված պսակների մի խումբ հիշեցնում է անտիկ ժամանակաշրջանի կերամիկային։ Սև գույնի կճուճների դեպի դուրս ցցվող պսակների բեկորները նման են Գառնիի առաջին դարերի դամբարանային նյութերին։ Այդ խմբին պետք է վերադրել օր. եռատերևաձև (օյնոխոյայի) պսակով բեկորը, բարձրորակ կավից պատրաստված, դժգույն արտաքին տեսքով լայն կանթը և ընդհանրապես բաց գույնի անգորով պատած խեցեղենը։

Այս տարի ևս հանդիպեցինք հաստապատ կարասների բեկորների, վերևից հարթ դեպի դուրս ցցվող պսակներով (նկ. 4, 3)։ Մի այդպիսի կարաս, բավական վնասված վիճակում, հայտնաբերվեց կիսակլոր աշտարակին կից սենյակի հարավային պատի տակ։

Ինչպես նախորդ տարիներում, դարերի խորքից շարունակեցինք դուրս բերել հելլենիստական գունազարդ կերամիկայի գոտեզարդ «բինակներ» Կարմրավուն, դեղին կամ վարդագույն ֆոնի վրա նկարված են տարբեր լայնքի գոտիներ, առանձին կամ զուգահեռ, որոնք երբեմն իրար հատում են, կամ առանձին զարդեր կազմում։ Այդ գոտիները շագանակագույն են, վարդագույն, սրճագույն, օխրայի գույնի կամ մուգ կարմիր (նկ. 5)։



Նկ. 4

Անհրաժեշտ է նշել, որ Հացավանից դուրս բերված այս խեցեղենը մեծ նշանակություն ունի հին Հայաստանի կերամիկայի պատմության համար, քանի որ նա սկիզբ է դնում հին Հայաստանի խեցեգործության ուսումնասիրման բնագավառում եղած բացի վերացմանը[3]։ Այդ բացը վերաբերում է կերամիկայի պատմության Ն. մ. թ. առաջին դարերին, քանի որ մի քանի տարի առաջ այդ ժամանակաշրջանի խեցեղենի արտաքին հատկանիշները նույնիսկ մեզ հայտնի չէին։ Գունազարդ կերամիկայի այս խումբը որոշակի նմանություն ունի հելլենիստական հուշարձանների նյութերին։ Սիրիայի Անտիոք քաղաքի շրջակայքից հայտնի են հելլենիստական ժամանակաշրջանի գոտեզարդ բաց դույնի խեցիներ[4]։ Կիլիկիայի Տարսոս քաղաքի Ն.մ.թ. առաջին դարերի կերամիկան նույնպես տարբեր գույնի գոտիներով է զարդարված՝ զուգահեռ կամ շրջակենտրոն դասավորությամբ[5]։ Գոտեզարդ կերամիկա է հանդես գալիս Աթենքի Ագորա-

---

[3] Գ. Տիրացյան, Հացավան ամրոցի 1961 թ. պեղումները, ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հասարակական գիտություններ), 1962, № 11։

[4] Antioch on the Orontes, IV, Fr. O. Waage, Ceramics and islamic coins, 1948, Princeton, տախտակ 1, նկ. 2, 3, 5։

[5] Excavations at Gozlu Kule Tarsus, The hellenistic and roman periods, vol. I, 1950, Princeton, տախտակ 132, № 189. տախտակ 134, № 220.



Ph. 5

Ph. 6

յի (հրապարակի) ստուգությամբ թվագրվող հելլենիստական շերտերից[6], ինչպես նաև Կորնթոսի նույն ժամանակի շերտերից[7]։ Նույնպիսի կերամիկա ծանոթ է Փոքր Ասիայից, օր. Պերգամից[8]։ Հաստատուն տվյալներ են մատակարարում նաև մերձսևծովյան հյուսիսային քաղաքները։ Հատկապես այդպիսի խեցիներով հարուստ է Խերսոնես քաղաքը, որտեղ հայտնաբերվել է բրուտի արհեստանոց նման կավանոթների արտադրության հետքերով[9]։ Օլվիա քաղաքը ևս մատակարարում է այդպիսի նյութեր[10]։ Հելլենիստական գունազարդ կերամիկա, ավելի քարդ զարդերով, Հացավանում, հայտնաբերվել է դեռևս 1961 թվականին։ Այս տիպի կավանոթների բեկորներով հատկապես հարուստ են Արմավիրը և Դվինը։

Նկ. 7

Հայաստանի պատմական թանգարանում ցուցադրված են նմուշներ Դվինից և Արմավիրից, որոնք ամենայն հավանականությամբ հելլենիստական ժամանակաշրջանի շերտերից են։ դուրս բերված։ Դվինի սրահում ցուցադրված մեծ տափաշիշը (ֆլյագա) զարդարված է շրջակենտրոն գունավոր գոտիներով, որոնք ուղղակիորեն ձայնակցում են Հացավանի գոտեզարդ խեցեղենի հետ։

Վաղ բրոնզե դարի գունազարդ կավանոթների պահարանում ցուցադրված էր մի մեծ բեկոր (№ 1331), Արմավիրից, որը ծածկված է տարբեր գույնի (սրճագույն, սև, սպիտակ) գոտիներով և զարդերով, նուանկյունաձև, ցանցաձև և ծաղկաշղթայաձև (գիրլյանդաձև)

[6] Homer A. Thomson. Two centuries of hellenistic pottery, Hesperia, Athen, 1934, vol. III, Նկ. 4, 5։

[7] Henry Robinson, Excavations at Corinth, 1960, Hesperia, vol. XXXI, № 2. 1962, տախտակ 46։

[8] Altertumer von Pergamon, h. I, 2, Berlin, 1913, A. Conze, Stadt u. Landschaft, Beiblatt 45.

[9] Г. Д. Белов, Отчет о раскопках Херсонеса за 1935—1936 гг. Госиздат Крым. АССР. 1938 г.: В. В. Борисова, Гончарные мастерские Херсонеса, Советская археология, 1958, рис. 7, стр. 144.

[10] Т. Н. Книпович, Художественная керамика в городах Причерноморья. Античные города северного Причерноморья. М.—Л., 1955, рис. 16, 19.

(նկ. 6)։ Զարդերի մի մասը անկասկած որոշ նմանություն ունի բրոնզե դարի գունազարդ կերամիկայի հետ, բայց պատակի պահպանված մասը և հատկապես նրա տակի բնորոշ ծորակաձև քիթը, ինչպես նաև զարդերի որոշ առանձնահատկությունները թույլ են տալիս վերագրելու հելլենիստական ժամանակաշրջանին։ Վաղ բրոնզե դարի գունազարդ կերամիկայի տրադիցիաների վերապրուկներով մեծ քանակությամբ կերամիկա է հայտնաբերվում Արմավիրում և Դվինում[11], ընդ որում շերտագրական բավական ստուգված միջավայրերում։



Նկ. 8

Հացավան ամրոցի 1962 թվականի պեղումների ընթացքում հանդիպեցինք նաև այնպիսի կերամիկայի, որը վերաբերվում է ավելի ուշ ժամանակաշրջանի։ Այդ նախ և առաջ ռելեֆ, հաստ դոտու վրա եղևնաձև զարդով պատած հաստատոր կարասն է, վերևից տափակ պսակով և ունի կանաչ անգորի հետքեր (նկ. 7)։ Այդ կարասը գտնվել է կիսակլոր աշտարակին կից սենյակի արևմտյան, առաջին շրջանին վերաբերող պատի վրա։ Հայաստանի պատմական թանգարանի պահեստում կա նման մի կարաս Դվինից (1948 թ., № 1905—135), որը պրոֆ. Դաֆադարյանի գնությամբ գտնվել է կենտրոնական թաղամասում, կաթողիկեի հիմքերի մոտ։ Մի այլ բեկոր ուռուցիկ վերադիր զարդեր ունի։

1962 թվականի կարևոր գյուտերից պետք է համարել երկանքի տակի բազալտե քարը (տրամ. 0,41 մ)։ Նրա հատակի մասը ուղիղ է, իսկ վերևինը՝ ուռուցիկ (նկ. 8)։ Այն բավական նման է Օլվիայում գտնված երկանքին[12]։ Բավական մեծ խորության վրա գտնվեցին կլոր ձևի, հղկված զարդերով հաստ ապակու բեկորներ։ Պսակի մասով մի մեծ բեկոր հավանաբար խորը թասի կամ բաժակի է պատկանում (նկ. 1, 1)։ Նման տեխնիկայով զարդարված տան-

---

11 Դվինի այս խեղեցենի հետ մեկ ծանոթացրել է պրոֆ. Կ. Դաֆադարյանը.

12 В. Д. Блаватский. Античная археология Северного Причерноморья. М. 1961, стр. 39.

ձաձև անոթ և այլ անոթների բեկորներ հայտնի են Գառնիից և թվագրվում են, բայց երևույթին, մ. թ. 3—4-րդ դարերով[13]։

Հղկված զարդերով անոթների պատրաստման վայրը դեռևս հայտնի չէ։ Մի քանի դիտակներ հակված են դրանք վերագրելու Հռենոսյան քաղաքների արհեստանոցներին, ուրիշները իրենց հայացքն են ուղղում դեպի Մերձավոր արևելքի ապակեգործական կենտրոնները, Սիրիա և Եգիպտոս[14]։

Այսպես կոչված պորֆիրիտից և կոնգլոմերատից (քարի տեսակներ) պատրաստված անոթների բեկորներ պատահականորեն Հացավանում գտնվել են դեռ վաղուց։ Այժմ այդպիսի բեկորներ են հայտնաբերվում ամրոցից, մեկը կլոր ոչ խորը թասի նման, ցածր եզրով (Նկ. 4, 2). մյուսը՝ դեռևս չորոշված իր, ներսից և դրսից նուրբ հղկված։

Հացավանի պեղումները հետաքրքիր տվյալներ են տալիս հիմնականում մ. թ. առաջին դարերի ամրոցաշինարարության և ճարտարապետության մասին, հարստացնելով որոշ չափով մեր գիտելիքները նշված ժամանակաշրջանի նյութական կուլտուրայի մի քանի ճյուղերի վերաբերյալ։ Միևնույն ժամանակ 1962 թվականի պեղումները ցույց են տալիս, որ ինչպես Գառնիում, Հացավանի ամրոցում ևս կյանքը շարունակվել է նաև հետագա դարերում, ամենայն հավանականությամբ վաղ միջնադարում։

---

13 Г. А. Тирацян, Материальная культура Армении первых веков н. э. по данным некрополя и бани в Гарни (автореферат кандидатской диссертации), Л., 1956, 13.

14 Н. А. Тихонова, Из материалов дубоссарского отряда молдавской экспедиции. Краткие сообщения Института истории материальной культуры, вып. 57. 1955. 96.